

Աստոմին® Ցողաշիթ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Աստոմին® Ցողաշիթը օգնում է թեթևացնել ցավը, որը առաջանում է բերանի խոռոչի լորձաթաղանթի այնպիսի ախտահարումների հետևանքով, ինչպիսին են՝ աֆտոզ ստոմատիտը, աֆտոզ խոցերը, փոքր վերքերը, որոնք առաջացել են ատամների ամրակներից և անհարմար պրոթեզներից:

Ազդեցությունը

Աստոմին® Ցողաշիթը պարունակում է պոլիվինիլպիրոլիդոն (PVP) և հիալուրոնաթթու, որոնք պաշտպանիչ շերտ են ստեղծում բերանի խոռոչի լորձաթաղանթի վրա, որը ծառայում է որպես մեխանիկական պատնեշ ախտահարված հատվածներում՝ թեթևացնելով անպաշտպան նյարդային վերջավորությունների գրգռման հետևանքով առաջացած ցավը: Բաղադրության մեջ առկա հիալուրոնաթթուն և Ալոե վերա նպաստում են վնասված հյուսվածքների բնական ապաքինմանը:

Օգտագործման ձևը

Առաջին անգամ օգտագործելու ժամանակ հանե՛ք կափարիչը և տեղադրե՛ք հեղուկացիրը: Ուղղե՛ք հեղուկացիրը բերանի խոռոչում գտնվող վերքի ուղղությամբ և ցողե՛ք 3 անգամ կամ այնքան որքան անհրաժեշտ է, մինչև ախտահարված տարածքը ամբողջությամբ ծածկվի: Լավագույն արդյունք ստանալու համար խորհուրդ է տրվում օգտագործումից հետո առնվազն մեկ ժամ չուտել և չխմել: Հեղուկացիրը թույլ է տալիս ամբողջությամբ պատել բերանի խոռոչի վերքերի մակերեսը:

Օգտագործել օրական 3-4 անգամ կամ, ըստ անհրաժեշտության, ավելի հաճախ:

Լուծույթի բաղադրությունը

Ջուր, պրոպիլենգլիկոլ, պոլիվինիլպիրոլիդոն (PVP), մալտոդեքստրին, Ալոե վերա (Aloe barbadensis), կալիումի սորբատ, նատրիումի բենզոատ, PEG-40 գերչակի հիդրոգենացված յուղ, ԷԴՏԱ դինատրիումական աղ, բենզալկոնիումի քլորիդ, նատրիումի հիալուրոնատ, բուրավետիչ, սախարին նատրիումական աղ, դիկալիումի գլիցիրիկատ:

Ուշադրություն

Ցանկացած բաղադրիչի նկատմամբ գերզգայունություն ունեցող հիվանդներին հակացուցված է Աստոմին® Ցողաշիթ օգտագործումը: Հղիության դեպքում բժշկական արտադրանքը օգտագործելուց առաջ խորհրդակցե՛ք բժշկի հետ: Բերանի խոռոչում խոցերի հաճախակի առաջացման դեպքում խորհուրդ է տրվում դիմել բժշկի:

Նախազգուշացում և նախազգուշական միջոցներ

Չօգտագործել պիտանելիության ժամկետի ավարտից հետո կամ եթե պարկուճը վնասված է, և կա արտահոսք: Պահպանել երեխաների համար անհասանելի վայրում: Պահել սենյակային ջերմաստիճանում, ջերմության աղբյուրներից հեռու և չսառեցնել: Խուսափե՛լ աչքերի մեջ լցվելուց:

Պարունակություն

15 մլ

Արտադրող

Ալիանս Ֆարմա Սրլ,
Վիալե Ռեստելի 5,
20124 Միլան, Իտալիա

Տարածող ընկերություն

Բեռլին-Խեմի ԱԳ (ՄենարինիԳրուպ),
Գլինիքեռ Վեգ 125,
12489 Բեռլին, Գերմանիա

Խմբագրման ամսաթիվ 09.2016